Համո Սահյան

Ի՞նչ Թաքցնեմ

«Ի՞նչ Թաքցնեմ» .
Էլ բան չունեմ
Ես աշխարհից թաքցնելու:
Մինչև հիմա, որ չեմ հանգել
Էլ ինձ ո ՞վ է հանգցնելու:
Վառվել եմ ես մանկուց ի վեր
Ծիծաղել եմ ու հառաչել,
Ծիծաղել եմ ու հառաչել
Ինձ գտնելու մի հարցումով.
Եվ վերջապես կամաց-կամաց
Սկսել եմ ինձ ճանաչել,
Թեկուզ `այսքան ուշացումով:
Սկսել եմ ինձ ճանաչել
Ոչ թե այլոց կարծիքներով ,
Ոչ թե թևիս ու գլխիս տակ
Դրած փափուկ բարձիկներով,
Այլ՝ հոգսերի ծովն ամփոփող
Իմ ծով սրտի տարողությամբ…
Յոթ գլխանի տառապանքին
Դիմանալու կարողությամբ:
Սկսել եմ ինձ ճանաչել
Ոչ թե ինչ-որ խաբված սիրով
Այլ հոգուս մեջ շառագունած

Երազներիս Կաթն Ծիրով:
Սկսել եմ ինձ ճանաչել
Այս համարձակ առավոտով,
Իմ վաստակի վարձով առատ,
Մաքուր պահած իմ հավատով,
Արյան գույնով իմ անարատ:
Սկսել եմ կամաց-կամաց
Ինձ ճանաչել ու հասկանալ,
Ինձնից անկախ պատճառներով
Գործած բոլոր մեղքերիս դեմ
Սկսել եմ կամաց-կամաց ըմբոստանալ:
Սկսել եմ կամաց-կամաց
Դառնալ ներհուն,
Դառնալ խոհեմ:
Մի կաթիլ ջուր պահանջողին՝
Շատրվաններ չխոստանալ
Սկսել եմ իմ բախտի հետ
Ավելի սերտ մտերմանալ:
Սկսել եմ ավելի շատ ջերմացնել
Ու ջերմանալ:
Սկսել եմ կամաց-կամաց
Բոլորի դեմ հոգիս բանալ,
Գարնանային այս ամպրոպով սրբագործել
Ու լվանալ:
Սկսել եմ երգով ,
Հոգով ու խոհելով
Հարստանալ:
Եվ վերջապես.
Սկսել եմ ես հասկանալ,
Որ բան չունեմ այս աշխարհից թաքցնելու,
Մինչև հիմա
Որ չեմ հանգել,
Էլ ինձ ով է հանգցնելու: